«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՀԻՄՈՒՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

TM AUDIT

ՀՀ, ք.Երևան 0014, Պ.Սևակ 8; Հեռ՝. (374 11) 60 70 81; info@tmaudit.am; www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության Հայաստանի գերագույն մարմնին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) կից ներկայացված հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունները (այսուհետ՝ տարեկան ֆինանսական հաշվետվություններ), որոնք ներառում են 2024 թվականի տարեկան ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի ու գույքի վերաբերյալ տարեկան հաշվետվություն-ները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով տարեկան ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստված են «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022թ. հուլիսի 22-ի N 04-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող պահանջներին համապատասխան:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կուսակցությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (այսուհետ՝ ՀՄԷՍԽ) կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում/ ֆինանսական հաշվետվողականության հիմունքը

Մենք ուշադրություն ենք հրավիրում տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից «Հատուկ նպատակի հիմունքը» ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է

ֆինանսական հաշվետվողականության հիմունքը: Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են Օրենքի և Որոշման ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, տարեկան ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը, սույն հանգամանքով պայմանավորված, չի ձևափոխվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվությունների համար

Կուսակցության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող դրույթների համաձայն տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կուսակցության տարեկան ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ տարեկան ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն տարեկան ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով տարեկան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է

ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում.

- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կուսակցության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն

Ղուկաս Աթոյան
Առաջադրանքի ղեկավար

5 մայիսի, 2025թ.
ք.Երևան, Պ/Սևակ 8